«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 11 - 1

15 հունիսի 2020 թվականի (հարցման կարգով)

2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում «Կառավարում» մասնագիտության առկա ուսուցման մագիստրատուրայի մոդուլային սկզբունքով իրականացվող «Գործարար վարչարարություն» և «Հանրային կառավարում» կրթական ծրագրերում քննաշրջանի ընթացքում քննությամբ ավարտվող դասընթացների թիվը կրճատելու մասին

Ի լրումն «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2020 թվականի ապրիլի 30-ի N 9 – 1 որոշման՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Կառավարում» մասնագիտության առկա ուսուցման մագիստրատուրայի մոդուլային սկզբունքով իրականացվող «Գործարար վարչարարություն» կրթական ծրագրի բիզնես ուղղության քննությամբ ավարտվող «Բիզնեսի հարկում», «Բիզնես բանակցություններ» և «Արժեթղթերի շուկա» դասընթացների գիտելիքի ստուգումները քննության փոխարեն կազմակերպել ստուգարքով:

2. «Կառավարում» մասնագիտության առկա ուսուցման մագիստրատուրայի մոդուլային սկզբունքով իրականացվող «Գործարար վարչարարություն» կրթական ծրագրի ֆինանսներ ուղղության քննությամբ ավարտվող «Արժեթղթերի շուկա», «Կորպորատիվ ֆինանսներ» և «Բիզնեսի հարկում» դասընթացների գիտելիքի ստուգումները քննության փոխարեն կազմակերպել ստուգարքով:

3. «Կառավարում» մասնագիտության առկա ուսուցման մագիստրատուրայի մոդուլային սկզբունքով իրականացվող «Հանրային կառավարում» կրթական ծրագրի քննությամբ ավարտվող «Առողջապահության կառավարում», «Կրթության կառավարում» և «Հանրային-մասնավոր գործընկերություն» դասընթացների գիտելիքի ստուգումները քննության փոխարեն կազմակերպել ստուգարքով:

4. «Հետազոտական սեմինար» մոդուլի ստուգումը «Գործարար վարչարարություն» և «Հանրային կառավարում» կրթական ծրագրերում ավարտել ստուգարքով:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գրիգորյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ռեկտորի պաշտոնակատար՝ **Դ. Գալոյան**

2020 թ. հունիսի 15

Երևան